ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀՈՒՅՆ ԺՈՂՈՎՐԴԻ 1821-1829 թթ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

ԲՐՈՒՏՅԱՆ Մ. Ա.

Հույն ժողովրդի XIX դ. և հետագա շրջանի պատմության մեջ 1821-1829 թթ. ազգային-ազատագրական պայքարը որոշիչ դեր ունեցավ: Այն ընթանում էր միջազգային բարդ իրադրությունում. Անգլիան, Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան ձգտում էին Ռուսաստանին հեռու պահել Բալկաններից և այդ նպատակի համար օգտագործում Օսմանյան կայսրությանը: Վերջինիս վարած բարբարոսական քաղաքականությունը հույների դեմ հանգեցրեց նրանց ազատագրական շարժմանը: Դեռևս XVIII դ. վերջից սկսած՝ ազատագրական պայքարում առաջատար դեր ունեցան հունական գաղութները: Շարժման տեսական հենքը դարձավ ֆրանսիական բուրժուական հեղափոխության գաղափարախոսությունը:

Հունական ազատագրական ոգին մշտապես ոգևորել է հայերին: Հայտնի է, որ դարեր շարունակ հույն և հայ ժողովուրդները թուրքական բռնապետությունը միասին թոթափելու փորձեր շատ են արել: Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում Կ. Պոլսում, Բալկաններում, Պոնտոսում, Կովկասում կողք կողքի ապրող հայերն ու հույները դժվար թե չարձագանքեին մեկը մյուսի ազատագրական կոչերին: Նմանատիպ գաղափարախոսության հիմնադիրներից էր Ռիգաս Վելեստինլիսը:

Երիտասարդ տարիներին Ռիգասը եղել է Կոստանդնուպոլսում, հետո՝ Բուխարեստում, տեղափոխվել Վիեննա, ապա հիմնադրել գաղտնի միություն՝ «Էտերիա» անվամբ: Լինելով Կ. Պոլսում՝ նա հավանաբար կապեր է ունեցել տեղի հայտնի հույն և հայ ընտանիքների հետ, քանի որ հանդես գալով որպես շարժման առաջնորդ Ալեքսանդր Իպսիլանտիի քարտուղար՝ Ռիգասը չէր կարող շփված չլինել, օրինակ, Իպսիլանտիի մերձավորներից մեկի՝ հայտնի պոլսահայ գործիչ Պողոս Սեբաստացու հետ[1]:

Ռիգասը մշակել է Օսմանյան կայսրության դեմ ապստամբության պլանները, գաղտնի տպագրել հեղափոխական գրքույկներ, բանաստեղծություններ, որոնցով կարևորվում են «Օսմանյան կայսրության ժողովուրդների սահմանադրությունը» և «Ռազմական օրհներգը»[2]: Վերջինս վկայում է հեղինակի տաղանդի և հայրենասիրության մասին. «Ավելի լավ է մեկ ժամ ազատության մեջ, քան

---

[1] **Акопян М.,** *Освобождение Греции и армянская общественная мысль. Центральная и Юго-восточная Европа в новое время, М., 1974, с. 151: Այս հեղինակը հնարավոր է համարում Ռիգասի կապը հայազգի հայտնի գործիչ Մանուկ բեյ Միրզայանի հետ:*

[2] **Иовва И.,** *Южные декабристы и греческое национально-освободительное движение, Кишинев, 1963, с. 23.*

40 տարի բանտեր և ստրկություն»,- ասում է նա[3]: Հայերի ազգային ըմբոստ ոգին և նրանցից սպասվող ակնկալիքներն էին պատճառն այն բանի, որ Ռիգասը իր «Ռազմական օրհներգում» բալկանյան ժողովուրդների հետ միասին հայերին էլ էր կոչ անում միանալ ազատագրական պայքարին. «Բուլղարնե՛ր, ալբանացինե՛ր, հայե՛ր և հույնե՛ր, ազատության համար եկեք սուր կապենք…»[4]: Ռիգասի սահմանադրությունը իրականում հեղափոխական մի փաստաթուղթ էր, որտեղ առաջարկվում էր տապալել Օսմանյան կայսրությունը, ստեղծել դեմոկրատական հանրապետություն: Կայսրության բոլոր ժողովուրդները, ինչպես նաև թուրքերը, պիտի ունենային հավասար իրավունքներ: Փոխադարձ օգնությունն ու համագործակցությունն էին լինելու ապագա պետության իրավական հենքը: Դա ամրագրված էր 34-րդ հոդվածում, որտեղ սահմանված էր թուրքերի, հույների, բուլղարացիների, հայերի իրավահավասարությունը: Սահմանադրության հիմնական կարգախոսներն էին «Ազատությունը, հավասարությունը, եղբայրությունը»: Սահմանադրությունն իր բնույթով առաջադեմ էր և նախատեսում էր արժանապատվության, ազատության գերակայություն[5]:

Հայերի մասին նշվում է նաև «Ժողովրդի ինքնավարության մասին» գլխի 7-րդ հոդվածում, ըստ որի, ժողովրդի ինքնավարությունը ներկայացնում են նոր պետության մեջ ապրողները՝ հույները, հայերը, բուլղարները, ալբանացիները, թուրքերը և յուրաքանչյուր ժողովուրդ՝ առանց օրենքի ու լեզվի բացառության: Սահմանադրության 122-րդ հոդվածում Ռիգասը գտնում է, որ օրենսդիր մարմինը բոլոր հույների, թուրքերի, հայերի համար հաստատում է

---

[3] **Ακτύπης Δ.,** *Sta Νεότερα χρόνια, Αθήνα, 1995, σ. 103. Ռիգասն իր ողջ ստեղծագործական արգասիքն ուղարկում է Տրիեստ, սակայն այն ընկնում է ոստիկանության ձեռքը, որի հետևանքով նրան կալանավորում են: Մոտ 4 ամիս տևում է նրա դատավարությունը, որի ժամանակ նա արիաբար ասել է. «Ես կնախընտրեի սատանային՝ որպես տիրակալ, քան թուրքերին»: Ռիգասի մահվան առնչությամբ կան մի քանի վարկածներ: Դրանցից մեկի համաձայն, թուրք բանտապանները Կ. Պոլիս տեղափոխելու պատրվակով նրան հանում են բանտից, հետո խեղդամահ անում Դանուբում, որտեղ վերջին պահին նա թուրքերին ասել է. «Շուտով կգա ժամանակը, երբ իմ երկիրը կհավաքի իմ աշխատանքի քաղցր պտուղները»* (**Βούρνας Τ.,** *Ιστορία της Νεώτερις Ελλάδας, Αθήνα 2000, σ. 61).*

[4] **Ακτύπης Δ.,** *նշվ. աշխ., էջ 101: Ռիգասի՝ հայերին հղած կոչին են անդրադառնում նաև Գ. Արշը և Մ. Հակոբյանը (***Արշ Գ.,** *Этеристское движение в России, М., 1970, с. 96;* **Акопян М.,** *նշվ. աշխ., էջ 151), թեև մեջբերման նրանց տարբերակը մի փոքր տարբերվում է հունարենից թարգմանած մեր տարբերակից:*

[5] **Βουρνας Τ.,** *նշվ. աշխ., էջ 41, 42: Հայերի հավասար իրավունքների մասին տե՛ս* **Արշ Գ.,** *Тайное общество “Филики этерия”. Из истории борьбы Греции за свержение османского ига, М., 1965, с. 24. Ռիգասի կոչին անդրադարձել է Հ. Մ. Բարթիկյանը: Նա նշում է, որ XVIII դ. հայ-հունական համագործակցության անհրաժեշտությունը գիտակցեց հույն ժողովրդի լուսավոր դեմքերից մեկը՝ Ռիգաս Վելեստինլիսը [***Բարթիկյան Հ.,** *Հունական «Հիդրա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին (Պատմա-բանասիրական հանդես, այսուհետև՝ ՊԲՀ, 1981, N 2, էջ 291)]:*

հավասարազոր պատիվ, ազատություն, իրենց ունեցվածքի անձեռնմխելիություն և այլն[6]:

Ռիգաս Վելեստինլիսի հեղափոխական գաղափարախոսությունն ունեցավ իր արձագանքները: 1914 թ. Օդեսայում ձևավորվեց «Ֆիլիկի էտերիա» գաղտնի կազմակերպությունը: Այն դարձավ հունական ազգային ազատագրական պայքարի առաջնորդը՝ ի դեմս հիմնադիրներ Նիկոլայոս Սկուֆասի, Աֆանասիոս Ցակալովի և Էմանուել Քսանթոսի: Նոր կազմակերպության անունը թարգմանաբար նշանակում էր «Բարեկամների միություն», որի անդամներին հաճախ անվանում էին հետերիստներ: Կարճ ժամանակաընթացքում շարժումը ծաղկեց հունաբնակ այն գաղութներում, որտեղ ապրում էին նաև մեծաթիվ հայեր:

Հետերականների ծրագրերը հստակ ցույց էին տալիս, որ լինելով Ռիգասի գաղափարական հետնորդներ՝ նրանք ևս կարևորում էին հայերի դերը օսմանյան լծի դեմ մղվող պայքարում: Հայերի՝ հետերականների հետ ունեցած սերտ շփման մասին կան և՛ տվյալներ, և՛ այդ իրողությունն ապացուցող մի շարք հանգամանքներ: Օդեսան հայաշատ քաղաք էր, ուստի չի բացառվում «Ֆիլիկի Էտերիայի» անդամների մեջ նաև հայեր լինելու իրողությունը: Փաստ է, օրինակ, որ հետերականներ են եղել նաև Իզմայիլի հայ բեռնակիրները՝ իրենց ավագ Խամալ բեյի հետ միասին[7]:

Ազատագրական պայքարի ակտիվ գործիչ Ալեքսանդր Իպսիլանտիի «Պայքար հանուն հավատքի և հայրենիքի» կոչը վաղուց տարածվել էր ոչ միայն Օդեսայում, այլ նաև Խերսոնեսում, Տագանրոգում, հասել Ղրիմ. դրա շնորհիվ Իպսիլանտիին էին միացել մեծաթիվ կամավորներ, որոնց մեջ էին 1600 հույներ, բուլղարացիներ, սերբեր[8]: Հույն պատմաբան Ա. Վակալոպուլոսի նշած այս բնակավայրերը մշտապես աչքի են ընկել իրենց հայաշատությամբ, տեղի հայերը ակտիվորեն մասնակցել են քաղաքական կյանքին, ուստի հնարավոր ենք համարում նրանց միանալը հետերականներին: Նման եզրահանգման ենք գալիս՝ հաշվի առնելով Ա. Վակալոպուլոսի այն միտքը, համաձայն որի՝ թե՛ Աթենքում 1813 թ., թե՛ Օդեսայում՝ 1814 թ. ստեղծված գաղտնի կազմակերպությունները նպատակ ունեին ոտքի հանել «հույներին և օսմանյան տիրապետության տակ ճնշված մյուս ժողովուրդներին» (այսինքն՝ նաև հայերին - Բ. Մ.)[9]:

---

[6] **Հակոբյան Մ.,** *Ռիգասը, նրա ծրագիրը և հայերը (Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, N 8, էջ 47):*

[7] **Հակոբյան Մ.,** *Արա Գ. Լ., Этеристское движение в России (ՊԲՀ, 1972, N 2, էջ 247): Այստեղ որոշ փաստեր կան հայերի՝ հունական ազատագրական շարժմանը մասնակցելու, շարժման մասին նրանց գնահատականների և այլնի մասին: Նպատակ չունենալով կրկնել ասվածը՝ հարկ ենք համարում չանդրադառնալ դրանց:*

[8] **Βακαλόπουλος Α.,** *Νέα Ελληνική ιστορία, Θεσσαλονίκη, 2003, σ., 159.*

[9] *Նույն տեղում, էջ 157: Իպսիլանտիի կոչին՝ միանալ ապստամբությանը, առաջինն արձագանքել են Պոնտոսի հույն բնակիչները: Ֆիլիկի Էտերիան, ընդլայնելով իր սահմանները, հասել է մինչև Կովկաս: Մեծաթիվ պոնտացի կամավոր- ներ են մասնակցել ազատագրական պայքարին՝ ստեղծելով «Տրապիզոն», «Սինոպ» և այլ անվանումներով ջոկատներ (***Σαμουηλίδης Χ.,** *Ιστορία του Ποντιακου Ελληνισμου, Αθήνα, 2002, σ. 171).*

Արդի հույն պատմաբան Ի. Խասիոտիսը ոչ միայն չի Ժխտում հայերի մասնակցությունը հույն ժողովրդի ազատագրական պայքարին, այլև ցույց է տալիս նրանց միջև առկա կարևոր մի ընդհանրություն. երկուսն էլ գիտակցում էին Ռուսաստանին դիմելու անհրաժեշտությունը[10]: Հունական ապստամբությունը բռնկվել է հասարակ ժողովրդի մեջ, ապա տարածվել հունաբնակ կղզիներում: Ապստամբած առաջին կղզիներից էին Սպեցեն, Իդրան, Պսարան և այլն, որտեղ մղված պայքարում կարևոր դեր են խաղացել հույն կանայք: Դրանցից հայտնի էին Մանթոս Մավրոյենուսը և Լասկարինա Բոբոլինան: Վերջինս մեծահարուստ էր և մինչ ապստամբությունը տնօրինում էր առևտրական նավերի: Նա իր միջոցներով զինել էր մի մեծ նավ և իր որդի Ագամեմնոնին նշանակել հրամանատար: Այդ նավը մասնակցել է Պելոպոնեսի մարտական գործողություններին[11]:

1821 թ. մարտին ապստամբները գրավել էին Մեսենայի մայրաքաղաք Կալամեն և ստեղծել առաջին հունական կառավարման մարմինը՝ Պելոպոնեսյան սենատը: 1822 թ. թուրքական բանակը Մահմուդ փաշայի գլխավորությամբ Պելոպոնեսի մոտ պարտություն է կրել հույն պարտիզանական ջոկատների կողմից, որ ղեկավարում էին Թեոդորոս Կոլոկոտրոնիսը, Դմիտրիոս Իպսիլանտին: Թուրքերը ստիպված՝ դեկտեմբերին Կոլոկոտրոնիսին են հանձնել Նավպլիոնի՝ Պելոպոնեսի ամենահզոր ամրոցի բանալիները[12]:

Որդու զոհվելուց հետո Բոբոլինան շարունակել է նավեր զինել մինչև ռազմական գործողությունների ավարտը: Ապստամբներին ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցում նրան օգնել է Դուզ Օղլու անվամբ մի հայ, որը նախկինում ղեկավարել է սուլթանի դրամահատարանը[13]: Խոսքը ամիրա Տյուզյաններից (Düz) մեկի մասին է, որոնք ղեկավարում էին սուլթանի դրամահատարանը:

---

[10] **Χασιωτης Ι.,** *Ιστορικές προηποθέσεις του Ελληνικού και του Αρμενικού διαφωτίσμου, Ο ελληνικός κόσμος ανάμεσα στην εποχι του Διαφωτίσμου και τον εικοσο αιωνα,* **Τόμος Α,** *Αθήνα, 2007, σ. 345. Այս հեղինակը մատնանշում է հայ ազատագրական գործիչների ծրագրերում հույների մասնակցության իրողությունները:*

[11] **Ακτύπης Δ.,** *նշվ. աշխ., էջ 124-125:* **Шпаро О.,** *Освобождение Греции и Россия (1821-1829 г.), М., 1965, с. 61. Այս կնոջ մասին կան հակասական տվյալներ: Հունական գրականությունը մեծ հարգանքով է անդրադառնում նրան, հակառակ որի, Թոմաս Գորդոնը, որ անգլիական բանակի սպա էր և մասնակցել էր 1821-1829 թթ. Բալկաններում տեղի ունեցող մարտական գործողություններին, Բոբոլինային համարում է դավաճան, որին, իբր, հետագայում քաղաքը լքելու հրաման են տվել (տե՛ս* **Gordon T.,** *History of the Greek Revolution, London, 1832, p. 102). Կարծում ենք՝ Գորդոնի հաղորդած տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այսօր էլ հույն պատմագիտությունը չի ժխտում Բոբոլինայի՝ ազատագրական պայքարին նվիրվածության հանգամանքը:*

[12] **Шпаро О.,** *նշվ. աշխ., էջ 58:*

[13] **Gordon T.,** *նշվ. աշխ., էջ 102:*

Տյուզյանները, որ Կ. Պոլիս էին գաղթել 1600-ական թթ., հայտնի ոսկերիչներ էին և կարճ ժամանակում ստանձնել էին արքունի ոսկերչապետության պաշտոնը: Դրան զուգահեռ՝ Տյուզյանները ղեկավարում էին արքունի փողերանոցը: 1812 թ.՝ ապրիլի 9-ին Հովհաննես Տյուզյանի մահից հետո նրա որդիներից Սարգիսը դարձել էր արքունի ոսկերչապետ, Գրիգորը՝ փողերանոցի ղեկավար[14]: Չնայած Տյուզյանները վաստակել էին արքունիքի վստահությունը, սակայն 1819 թ. անհասկանալի պատճառներով նրանց նկատմամբ բռնություններ են սկսվում՝ տարբեր և անհիմն պատճառաբանություններով: Նախ, հրաման է արձակվում. «Տյուզեանց հաշիւները քննել, որոնք ապահովաբար բաց մը պիտի պարունակէին, հետեւանք անհաշիւ ծախքերու եւ թոյլ մատակարարութեան»[15]: Իրադարձությունների ականատես Ավետիս Պերպերյանը բռնությունների պատճառ է համարում Տյուզյանների՝ կաթոլիկությանը հարելու հանգամանքը[16]: Մ. Օրմանյանը նրանց վերաբերյալ արված զանազան զրպարտություններն անվանում է «ենթադրական մեկնութիւններ»[17]: Անգո «հիմքերով» 1819 թ. օգոստոսի 29-ին, ուրբաթ օրը (պետականորեն ոչ աշխատանքային օր), Տյուզյանները ձերբակալվում են, նրանց ունեցվածքը բռնագրավվում է: Այս ամենի և նրանց հետագա դատավարության մասին զարմանալիորեն ոչ մի արձանագրություն չկա, և ինչպես Օրմանյանն է նշում. «Ոչ մի պատմողի մօտ չենք գտներ, որ ամբաստանեալներու մասին ձեւակերպութիւններ կատարուած ըլլան, եւ չենք գիտեր, թէ դատավարութեան պակասութե՞ն, թէ ոչ պատմողներու մոռացութեան պիտի վերագրենք այդ լռութիւնը»[18]:

Առանց լուրջ մեղադրանք ներկայացնելու՝ 1819 թ. սեպտեմբերին Բարձր Դռան առջև գլխատում են Սարգիս Տյուզյանին, Միքայելը և Մկրտիչը կախաղան են բարձրացվում: Արքունի հրամանով քառասուն անձ ձերբակալվում են, որոնց մեջ էին Տյուզյան գերդաստանի անդամները: 1820 թ. մարտի 1-ի հրամանով Կարապետ, Հակոբ, Պողոս, Հարություն Տյուզյանները և նրանց բարեկամներից ոմանք արտաքսվում են Կ. Պոլսից: Իշխանությունների կողմից Տյուզյանների նկատմամբ կիրառվող բռնությունները բավական խորը ենթատեքստ են պարունակում: Դժվար թե պետության համար խիստ կարևոր և երևելի այս անձանց մահապատժի կամ աքսորի ենթարկեին միայն դավանանքի, յուրացումների կամ ինչ-ինչ զրպարտությունների պատճառով: Երկար ժամանակ պատմության մեջ անհայտ այս հարցի պատասխանը կարելի է որոնել Տյուզյանների և հույն ապստամբների միջև եղած կապերում (օրինակ՝ Բոբոլինայի - Բ. Մ.):

Հայտնի է, որ դեռևս 1818 թ. «Ֆիլիկի Էտերիայի» ղեկավարությունը տեղափոխվել էր Կ. Պոլիս՝ ներառելով տեղի առևտրականների,

---

[14] **Օրմանեան Մ.,** *Ազգապատում, հ. Գ, Պէյրութ, 1961, էջ 3441-3442:*

[15] *Նույն տեղում, էջ 3453:*

[16] **Պէրպէրեան Ա.,** *Պատմութիւն Հայոց, Կոստանդնուպօլիս, 1871, էջ 103:*

[17] **Օրմանեան Մ.,** *նշվ. աշխ., էջ 3453:*

[18] *Նույն տեղում, էջ 3456:*

նավաստիների և բնակչության տարբեր խավերի[19]: Մինչ ապստամբություն սկսելը հետերիստների կապը Կ. Պոլսի հույների և հայտնի հայերից ոմանց հետ չի բացառում, որ վերջիններիս մեջ են եղել նաև Տյուզյանները: Կարծում ենք, որ միայն այս դեպքում կառավարությունը Տյուզյանների նկատմամբ ծայր աստիճանի կոշտ քաղաքականություն կկիրառեր:

Կոնկրետ անունների և գործողությունների մասին հիշատակությունների սղության հետ մեկտեղ, ժամանակակիցների վկայությունները հնարավորություն են տալիս ենթադրել, որ հույների ազատագրական պայքարին հայերը ևս ակտիվորեն մասնակցել են: Պարզվում է, որ հույների կողմից հայերի նկատմամբ տածած մեծ հարգանքը նկատել և օգտագործել են եվրոպացի դիվանագետները: Օրինակ, 1824 թ. երբ ֆրանսիացիները փորձում էին միջամտել հույն-թուրքական բախումներին և փրկագին վճարել Նավպլիոնում գերեվարված թուրք փաշաներին ազատելու համար, հաշվի առնելով հույների հարգանքը հայերի նկատմամբ՝ բանակցելու նպատակով դիմում են հայ մեծահարուստ սեղանավորների միջնորդությանը[20]:

XIX դ. եվրոպացի ճանապարհորդները, Օսմանյան կայսրության վարած հակաքրիստոնեական քաղաքականությանը ականատես լինելով, օրինաչափ էին համարում կայսրության դեմ ելած և՛ հույների, և՛ հայերի ընդվզումները: Ընդ որում, ընդվզում էին և՛ հասարակ բնակչությունը, և՛ մեծահարուստ հույներն ու հայերը, որոնք չունեին ո՛չ իրավունքների, ո՛չ գույքի ապահովություն: Այսպես, XIX դ. անգլիացի ճանապարհորդը նշում է, որ ազատագրական պայքարը անազատ կյանքից ձերբազատվելու կարևոր գործոն էր մեծահարուստ հայերի և հույների համար, որոնք իրավազուրկ էին օսմանյան պետությունում[21]:

XIX դարի մեկ այլ ականատես՝ հեղինակ Ջորջ Վեդինգտոնը հիմնավորում էր օսմանյան վարչակարգի հանդեպ հայերի և հույների վերաբերմունքը. «Եթե թուրքական կառավարությունն այսքան դաժան է, չե՞ն արդարացվում արդյոք քրիստոնյաների ձգտումները՝ ազատվել թշվառությունից: Մանավանդ որ մահմեդականությու- նը չի ենթարկվում այն ճնշմանը, որ հանդուրժում են ռայանե-ը»[22]: Հեղինակը բավական մեծ նշանակություն է տալիս հունա-կան ապստամբությանը՝ նշելով, որ Օսմանյան կայսրության հետ բազում կապերով կապված հայերի, հույների, բուլղարացիների ազատագրումը կիրականացվի բացառապես հունական հեղափոխության հաղթանակի միջոցով[23]:

Հայտնի է, որ Կոստանդնուպոլսի հույն բնակչությունը աջակցել է իր հայրենակիցներին ապստամբության առաջին իսկ պահից: Մեծահարուստ շատ հույներ իրենց ընտանիքներով տեղափոխվել են

---

[19] **Авгитидис К.,** *Прогрессивная греческая эмиграция, Киев, 1987, с. 18.*

[20] **Gordon T.,** *նշվ. աշխ., էջ 100:*

[21] **Schiffer R.,** *British Travellers in the 19th Century Turkey, Rodopi, 1999, p. 269.*

[22] **Weddington G.,** *A Visit to Greece, London, 1829, p. 23.*

[23] *Նույն տեղում, էջ 24:*

Պելոպոնես՝ ազատագրական պայքարին մասնակցելու նպատակով: Այդ երևույթը մեծ ծավալ է ընդգրկել հատկապես Ալեքսանդր Իպսիլանտիի՝ ապստամբներին միանալու կոչից հետո: Դա պատճառ է դարձել կառավարության կողմից բռնություններ կիրառելու պոլսաբնակ հույների նկատմամբ: Դրանք հատկապես մեծ չափեր ստացան Կ.Պոլսի հույն պատրիարքին հղված նամակը ձեռք բերելուց հետո, որտեղ ապստամբներին միանալու կոչեր էին արվում: Մայրաքաղաքում սկսում են դաժան հաշվեհարդար տեսնել ոչ միայն հույների, այլ նաև հայերի ու հրեաների նկատմամբ: Այս ամենի մասին փաստում է և ականատես Ա. Պերպերյանն իր «Պատմութիւն հայոց» աշխատությունում[24], որտեղ մի ամբողջ գլուխ նվիրված է հունական ապստամբությանը: Պերպերյանն օգտագործել է պատրիարքարանի դիվանի ձեռագրերը[25]: Գոյություն ունի Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանում պահվող՝ հույների 1821-1829 թթ. ապստամբությանը վերաբերող մի այլ ձեռագիր՝ «Պատմութիւն ապստամբութեան Պուղտանու Պէյին, եւ անցից Յունաց» վերնագրով. ենթադրվում, է որ այն նույնպես պատկանում է Ա. Պերպերյանին[26]:

Ուսումնասիրելով երկու աղբյուրները՝ մեզ համար ակնհայտ դարձան որոշ տարբերություններ: Պերպերյանի աշխատության և ձեռագրի միջև հակասություն կա հույն պատրիարքի մահվան վարկածի մասին: Կառավարության հրամանով պատրիարք Գրիգորիոսին կախաղան են բարձրացնում պատրիարքարանի բակում: Երեք օր անց դիակը քարշ են տալիս քաղաքի փողոցներով, ապա՝ ծովը գցում: Ըստ Պերպերյանի, դիակը գտնում է մի ռուս նավապետ, տեղափոխում Օդեսա, հանձնում տեղի հույն հոգևորականներին: Իսկ ձեռագրի վկայությամբ, թերսանեի հույները, հավանաբար կաշառքով, կարողացել են ձեռք բերել դիակը և թաղել Խոջաբեյում[27]: Ձեռագրում առկա են ժամանակագրական որոշ տվյալներ: Մանրամասնն ներկայացված են մարտի 16-ի, 21-ի արքունական հրամաննե-րի, ապրիլին կառավարության կիրառած հակահունական և հակահայկական բռնությունների մասին: Դրանք կարևոր հանգամանքներ են, որ երբեմն բացակայում են Պերպերյանի երկում[28]: Ըստ ձեռագրի, իշխանության կիրառած բռնություններից զերծ էին մնացել հրեաները. «... եւ սկսան զանցաւոր քրիստոնեայս մերկացուցանել թափել 'ի դրամոց՝ կեղեքել, վիրաւորել եւ մահացուցանել, թէ 'ի հրապարակի, թէ 'ի մեկուսի տեղիս, թէ 'ի բազմամբոխ վաճառանոցս՝ եւ թէ յանմարդի վայրս, իւրաքանչիւրքն ընկերեալք 'ի մեծ թշնա-

[24] **Պերպերեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 171-177:*

[25] *Դրանք հատկապես կարևորվում են նրանով, որ Կ. Պոլսի պատրիարքարանն այրվել է, և ձեռագիրը սկզբնաղբյուրի արժեք ունի:*

[26] **Հովակիմյան Ա.,** *Հայերեն նորահայտ վավերագիր 1821-1829 թթ. հույների ապստամբության մասին (ՊԲՀ, 1986, N 1-2, էջ 321-344),* **Պերպերեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 171-179:*

[27] **Հովակիմյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 328-329,* **Պերպերեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 174-175:*

[28] **Հովակիմյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 326:*

մութիւն առ Յոյնս եւ առ Հայս, իսկ Հրէից ո՛չինչ...»[29]: Պերպերյանը՝ հակառակը, վկայում է, որ կոտորածներից անմասն չեն մնացել նաև հրեաները. «Եւ ահա այս էր, զոր խնդրէր Իբսիլանդեանն Աղէքսանդրը եւ Միխալ պէյ, որք այսու խորամանկ հնարիւք մինչեւ ցայս վայր հասուցին զայս մտածութիւն եւ զխորհուրդ իւրեանց, թէպէտ եւ բազմաց վնասուց եղեն պատճառք եւ անհամար անձանց չարաչար սպանման, եթէ ազգի իւրեանց եւ եթէ Տաճկաց, եթէ Հայոց եւ եթէ Հրէից»[30]:

Չնայած առկա որոշ տարբերություններին՝ երկու աղբյուրներն էլ վկայում են, որ Օսմանյան կայսրությունը, կռահելով հույների ապստամբությանը հայերի մասնակցության մասին, խիստ զգոնություն է ցուցաբերել վերջիններիս նկատմամբ: Այդ մասին ձեռագրում ասվում է. «Նմին իրի մարտի Ժ [10] յարքունուստ պույրուլթու եկն առ Սրբազան Պատրիարքն, որ ունէր օրինակ զայս. թէ Հայք եւս թէ ÿի տան՝ թէ ÿի փողոցի եւ յայլ տեղիս քանի անձինք ÿի միասին եկեալ մի՛ խօսեսցին ինչ զիրացն եղելոց, եւ եթէ գիտեն, թէ յուրեք այսպիսի խռովութիւն յարուցանօղ եւ զապստամբութիւն յորդորօղ զարս, կամ զթուղթս գրեալս, եկեսցեն ազդ արասցեն տէրութեան...»[31]: Արքունական հրամանը մահապատիժ էր սահմանում այն հայերի համար, ովքեր կամ կթաքցնեին ապստամբ հույներին, կամ գաղտնի կպահեին որևէ տեղեկություն: Այդ հրամանը կրկին չէր վերաբերում հրեաներին, մի բան, որ մեզ հնարավորություն է տալիս ենթադրել, որ կառավարությունը նկատի է ունեցել հայերի մասնակցությունը հունական շարժմանը՝ ունենալով հստակ փաստեր: Ըստ Ա. Պերպերյանի, Կ. Պոլսում կախաղան են բարձրացվել հայտնի հայեր. «և 'ի 29 ապրիլի կախեցաւ և Չարազեան Գասպար ամիրայ 'ի դրանէ Վալիտէ խանին 'ի պատճառս լինելոյ հատավաճառ Տէփէտէլէնլի Ալի փաշային, որ ապստամբեալն էր յայնժամ 'ի տէրութենէն»[32]: Ստացվում է, որ Գասպար ամիրան եղել է Յանինայի Ալի փաշայի՝ Տեփեդելենի դրամահատարանի գլխավորը:

1788 թ. Ալի փաշան նշանակվել էր Յանինայի կառավարիչ և ձևականորեն ենթարկվում էր սուլթանին: Վերջինս, չհանդուրժելով Ալիի ինքնուրույն գործելաոճը, Յանինայի կառավարիչ է նշանակում Ալիի ոխերիմ թշնամիներից մեկին: Ալին չի ենթարկվում արքունական հրամանին և փորձում է ստեղծել ալբանական անկախ

---

[29] *Նույն տեղում, էջ 332:*

[30] **Պէրպէրեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 176:*

[31] **Հովակիմյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 325:*

[32] **Պէրպէրեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 175: Այս մասին մեզ տեղեկություն է հաղորդում նաև Մ. Օրմանյանը. հավանաբար, նա օգտվել է հենց Պերպերյանի աշխատությունից. «Յունական շփոթներու միջոցին Հայոց վրայ ալ վնասներ պակաս չեղան, քանիներ քսութեանց ու զրպարտութեանց հանդիպելով սպանեցան, Յովհաննէս Պապաօղլու 1821 թ. ապրիլի 7-ին յօշոտուեցաւ, Գասպար Չերազ ամիրա ապրիլի 21-ին կախուեցաւ եւ խմբովին կոտորածներ ալ պակաս չեղան: Բայց մյուս կողմէն Յոյներն՝ կառավարութեան աչքին կասկածելի դառնալովը, պաշտօնական եւ ելեւմտական գործերէ սկսան հեռու պահիլ, եւ նոյն շրջանակներուն մեջ Հայերուն ասպարեզը ընդարձակեցաւ»* (**Օրմանեան Մ.,** *նշվ. աշխ.,էջ 4078):*

իշխանություն, ազատագրել Յանինան: Այդ նպատակով նա 1820 թ. ապստամբություն է բարձրացնում Օսմանյան կայսրության դեմ՝ հույներին կոչ անելով միանալ իրեն: Ապստամբությունն ավարտվում է 1822 թ. հունվարին՝ Ալիի պարտությամբ: Նրան գլխատում են և գլուխն ի ցույց դնում արքունիքի բակում: Ապստամբության ընթացքում Ալին կարողանում է իր կողմը գրավել մեծ քանակությամբ հույն կամավորների[33]: Դժվար թե միայն Ալիի դրամապետը լինելու համար Գասպար ամիրան ենթարկվեր խոշտանգումների: Ներկայացված իրավիճակը ենթադրել է տալիս, որ նա որոշ հույների հետ միասին օժանդակել է ապստամբությանը:

Պերպերյանը խոսում է ապրիլի 4-ին Կ. Պոլսում կատարված դեպքերի մասին. «Տեսեալ զայսոսիկ Եէնիչէրի կոչեցեալ սրիկայից սկսան նոքա առանց հրամանի արքայի գանել եւ կռփահարել զՀայս եւ զՅոյնս, եւ նախ առաջին զՊապա օղլու պարօն Հայրապետն յօշոտեցին անդամ անդամ ÿի Տիւան եօլուն, եւ յետ աւուրց ինչ եւ զայլ եւս Հայազգիս սկսան սրամահ խողխողել 'ի Կոստանդնուպօլիս եւ 'ի գիւղօրէսն, եւ եղեւ քաղաքն իբրեւ զծով ալեկոծեալ...»[34]: Հիշյալները հայտնի մարդիկ էին, քաղաքական կյանքի անցուդարձին մասնակից, դրա համար ենիչերիները, օգտվելով խառը իրավիճակից և կառավարության ընձեռած «հնարավորությունից», սպանել են նրանց:

Ըստ վավերագրի, նշված կոտորածներից հետո գերեվարված հայերից ոմանք նամակով օգնություն են խնդրել պատրիարքից. «Մեք չորեքին անձինքս ծառայք Տէրութեանդ ազգաւ եւ կրօնիւ Հայ գոլով՝ զմեզ ընդ Յոյնս վերածին գերեվարք մեր ÿի Քիոսէ՝ եւ ածեալ բերեալ վարէին զմեզ աստ ÿի գերութիւն. արդ չունելով մեր յոյս եւ ճար յուստեքէ փրկութեան՝ ÿի ձեռաց արանց անիրաւ գերչաց, առ ամենախնամ Սրբազան հայրդ մեր պաղատանօք ձգիմք զի զհոգիս մեր եւ զմարմին փրկեսցես ÿի կորստենէ մերմէ յայսմանէ, եւ եթէ ո՛չ աճապարեսցէ Սրբութիւն ձեր ձեռն տալ մերս ազատութեան ÿի բռնութենէ տանջանացս, զորս ածեն ÿի վերայ մեր ունողքն զմեզ, եւ յանհնարին ստիպմանց՝ ըստ բարուց բարբարոս գործոց նոցա, հոգիք մեր ընդ մարմինս մեր գլորին յանբերելի՝ վիհս կորուսեան, եւ ÿի գուբ թաղին աղջամղջին գեհենի»[35]: Գերեվարված հայերից ոմանք ազատ են արձակվում պատրիարքի միջնորդությամբ, որի համար հսկայական միջոցներ են ծախսվում:

Հույն բնակչության հոսքը հատկապես դեպի Պելոպոնես, անհանգստացնում է իշխանություններին, ուստի խստագույնս արգելվում է նրանց տեղաշարժը: Այդ օրենքը վերաբերում էր նաև հայերին. «Իսկ յոլովք այնք էին յերեւելեացն Յունաց՝ որք գնացին ելին 'ի քաղաքէս զանխուլ փախստեամբ, զորոց զտունս դատարկեցեալ միայն 'ի բնակչաց՝ գտանել մարթացան, որք եղենն նոցա հետամուտք, առ որս ցասուցեալ յոյժ տէրութիւնն հրաման հանէր առ

[33] **Новичев А.,** *История Турции, т. II, ч. I (1792-1839), Л., 1968, с.121.*
[34] **Պերպերեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 174:*
[35] **Հովակիմյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 340:*

Յոյնս եւ առ Հայս չելանել ումեք 'ի քաղաքէս, եւ որոց ելանենն՝ կտտամահ սպառնալիս խոստանայր և դառնաչարչար մահս»[36]:

Հայերի նկատմամբ խստություններ կիրառվում էին ոչ միայն Կ. Պոլսում. դրա մասին է վկայում այն հայտնի իրողությունը, որ 1825 թ. Զմյուռնիայի Ս. Մեսրոպյան վարժարանի շինարարությունը դադարեցվել է կառավարության հրամանով: Այդ մասին Թ. Ճերմակյանը գրել է. «Ճիշտ հելլենական ապստամբութեան միջոցով տեղական կառավարութիւնը այն կարծիքը կունենայ, կամ կը ձեւացնի, թէ հայերն ալ ապստամբութեան կը պատրաստուեն և անոր համար ամրոցանման շենք մը կը կառուցեն: Ուստի վարժարանի շինութիւնը կարգելուի, բոլոր ազգապետները կը բանտարկուեն»[37]:

Հունական ապստամբությունը որպես լավագույն օրինակ է ծառայեցվել հայ ժողովրդին: Այդ նպատակին էր ուղղված Ստ. Կանայանցի (Հայ-Արմեն - Բ. Մ.) կողմից Կառլ Բարթոլդիի աշխատության թարգմանությունը, որտեղ թարգմանիչը անդրադառնալով թուրքերի տիրապետության դեմ հույն ժողովրդի պայքարին՝ նշում է, որ «մեր նպատակի ու ձգտումների համար օգտակար կը լինէր համեմատել մեր և նոցա հանգամանքները, ժամանակն ու միջոցները և ուրիշների փորձառութիւնից օգտուել»[38]: Հունական ապստամբությունը Օսմանյան կայսրությանը կանգնեցրեց քաղաքական ճգնաժամի առջև: Այն պատճառած վնասներին ավելացրեց ևս մեկը. ըստ եվրոպացի ականատեսի, իրական ապստամբությունն այնքան անտանելի չէր, որքան նրանից հետո առաջացած հույն բնակչության արտագաղթը Թուրքիայից: Հույների մեջ կար այսպիսի մտայնություն. առավել լավ է միանալ ապստամբությանը, քան կախված լինել Բարձր Դռնից: Փաստորեն, կայսրությունը կորցրեց ստեղծագործ բնակչության մի հոծ զանգված[39]:

Բնակչության արտագաղթի հետևանքով հույների ստվար մի զանգված բնակվեց Կովկասում՝ հատկապես Հայաստանում (Ախթալայում, Ալավերդիում, Շամլուղում, Գյումրիում) և Վրաստանում (Թբիլիսիում, Ծալկայում)[40]: XIX դ. սկզբին գաղթածները հայաբնակ վայրերում հիմնեցին նոր բնակավայրեր՝ առավել ամրապնդելով հայ-հունական հարաբերությունների հետագա զարգացումը:

---

[36] *Նույն տեղում, էջ 334:*

[37] *Թ. Ճերմակյանի խոսքը մեջբերել ենք Մ. Հակոբյանի հիշյալ հոդվածից (***Հակոբյան Մ.,** *Арш Г. Л., Этеристское движение в России, с. 248):*

[38] **Բարթոլդի Կ.,** *Պատմութիւն Յունաստանի, թարգմ. Ստ. Կանայանց, Վաղարշապատ, 1906, էջ Ե:*

[39] *Նույն տեղում, էջ 24:*

[40] **Σαμουηλίδης Χ.,** *նշվ. աշխ., էջ 182, 183:*

АРМЯНЕ И ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА ГРЕЧЕСКОГО НАРОДА В 1821-1829 ГГ.

БРУТЯН М. А.

Резюме

В освободительной борьбе греческого народа в 1821-1829 гг. армяне сыграли большую роль. На участие армян в освободительном движении указывают не только армянские, но и греческие историки – А. Вакалопулос и И. Хассиотис. Офицер британской армии Томас Гордон оставил важные свидетельства об участии армян в этом движении. По его данным, большую поддержку повстанцам оказал армянин по имени Дуз Оглу, представитель Тюзянской династии, в отношении которой османское правительство учинило жестокую расправу, поскольку представители рода Тюзянов помогали восставшим. По свидетельству Аветиса Перперяна, восставший против государства руководитель Янины Али паша был убит вместе со своим казначеем Гаспаром Амира, который всячески помогал грекам. Греческое восстание еще более укрепило армяно-греческие взаимоотношения, подняв их на более высокую ступень.